

## Օրագրության ժամրի պատմության և տիպաբանության հարցեր

Օրագրությունը ինքնակենսագրական արձակի տարատեսակներից մեկն է և ինքնակենսագրության, հուշագրության, ուղեգրության, նամականու հետ կազմում է մենուարային ժամրը: Վերջինս գրականագիտության մեջ համարվում է գիտական-փաստագրական ժամր: Ոուս գրականագետ Գլադկովն այն դիտում է որպես առանձին գրական սեռ, իսկ գրականագետ Ա. Կարոինը հավելում է, թե մենուարային ժամրերը արձակի, դրամայի, պոեզիայի ամբողջականություն են և, արտացոլելով գրականության և պատմության զարգացումը, միաժամանակ նյութ են մատակարարում այս բնագավառներին:<sup>1</sup> Հատկանշական է այն հանգամանքը, որ օրագրի պատմական-աղբյուրագիտական արժեքն ու նշանակությունը շեշտվում է բոլոր գրականագետների կողմից, ովքեր անդրադարձել են այս ժամրի պատմության, տիպաբանության, պոետիկայի և այլ հարցերի քննությանը:<sup>2</sup> Օրագիրը, դիտում է Կիրիլ Կոբրինը, «ամենապատմական» ժամրն է, որ ստեղծվելով «պատմության գիտակցմանբ», պարզապես գրական ժամրի է վերածվել միայն պատմամշակութային փոփոխման գործընթացում, այսինքն՝ «Երբ մարդը հետաքրքիր է դառնում ոչ միայն ինքն իրեն, այլ նաև իրեն շրջապատողներին: Պատմության մասին արևմտյան պատկերացումը կատարելապես արտացոլված է օրագրերում, քանի որ այն, իր հեղինակի հետ, ունի և սկիզբ, և ավարտ»:<sup>3</sup> Այս հանգամանքը նկատի առնելով՝ Մարինա Չունյուկինան օրագիրը սահմանում է որպես իրապարակախոսական (ուբլուզուսուպեսկու),<sup>4</sup> իսկ արվեստաբան Լետյագինը՝ մարգինալ ժամր:<sup>5</sup>

Այսօր էլ ամբողջովին հետազոտված չէ օրագրի գեղարվեստական-փաստագրական, մշակութաբանական ֆենոմենը գրականության պատմության մեջ, թեև արդեն իսկ ձեռնարկումներ կան ժամրի պատմության և տեսության հետազոտական աշխատանքներ կատարելու նպատակադրումով:

Օրագրում ի մի են բերվում այն վարողի ամենանվիրական մտքերն ու ապրումները, խոհերն ու տագնապները: Այստեղ ոչ թե արտացոլվում կամ նկարագրվում է օրագրողը, այլ արվեստագետի անհատականությունն է ինքնին, նրա էության գաղտնագրված խորքերը, կենսափորձը: Օրագիրը արվեստի ստեղծագործություն չէ այն իմաստով, որ ավելի շուտ արտացոլում է առօրյան, քան գեղարվեստը, թեև նրանում իշխատակվող փաստը, վավերագրությունը կիրառվում են էսթետիկական նշանակությամբ: Ի տարբերություն գեղարվեստական գրականու-

1. [http://planetadisser.cim/see/dis\\_184301.html](http://planetadisser.cim/see/dis_184301.html):

2. Այս մասին առավել հանգամանալից տե՛ս Բօբրովա Օլյգա Բորисовна, Դնեվնիկ Կ. Ի. Չուկովսкого в историко-литературном контексте, Автограферат, Волгоград, 2007:

Լետյացին, Լև Նիկոլաևիչ, Լичный дневник: самосознание жанра, Известия Российского государственного педагогического университета имени А. И. Герцена, 2008, СПб, N 10(56), С.56-67.: <http://lib.herzen.spb.ru/page152a.asp?s=11>

Новожилова Алина Михайловна, Петербургские дневники Зинаиды Гиппиус ("Синяя книга", "Черные тетради", "черная книжка", Серый блокнот): проблемы поэтики жанра", Автограферат, СПб, 2004:

Полляк Диана Мироновна, Жанр дневника и проблемы его типологии, Автограферат, Алматы, 2004:

3. Կօբրին Կիրիլ, Պօխվալ դնեվնիկу, Նորое литеրатурное обозрение, N61, Մոսկվա, 2003, стр. 288-295:

4. Մարինա Չուլյուկինա, Դնեվնիկ ինչ ժանր պուблицистиկա: предметно-функциональные особенности, Автограферат, Կազանь, 2009:

5. Լետյացին, Լև Նիկոլաևիչ, Լичный дневник: самосознание жанра, Известия Российского государственного педагогического университета имени А. И. Герцена, 2008, СПб, N 10(56), С.59:

թյան, որը իրատարակությունից հետո «ինքնուրույն» կյանքով է «ապրում», օրագրությունն օրագրողից անբաժան է, քանի որ օրագրողի Ես-ը, հիգիէզիակը ինքնավերլության, ինքնազննման անմիջական տարածք է, որն ազատում է ձևի կաղապարայնությունից, մտքերը, զգացմունքները քողարկելու կամ այլաբանելու անհրաժեշտությունից:

Ժանրի կազմավորման սահմանները որոշելը բավականին բարդ է: Որոշ գրականագետներ այն չեն տրոհում օրագրի կառուցվածքից և վարման նպատակից: Ենելով այս հանգամանքից՝ ժանրի ձևավորման պատմությունը կապում են իին հունական և հռոմեական վարքագրության, ինքնակենսագրության ու նամականու հետ (Սենեկա, Մարկոս Ավրելիոս, Ցիցերոն, Պլատոն), այլ կերպ ասած՝ նախաքրիստոնեական շրջանի: Հաջորդ փուլը քրիստոնեության ժամանակաշրջանն է: Վերածննդի դարաշրջանում մեծանում է ձգտումն ինչպես գիտության, այնպես էլ մարդու, հասարակության և պատմության գեղարվեստական ուսումնասիրության հանդեպ: Անհատի ինքնագիտակցության հետ հատկապես զարգանում է ինքնակենսագրությանն անդրադառնալու անհրաժեշտությունը: Այս նույն պատճառն էլ իիմք է հանդիսանում նամականու և օրագրության ժանրերի հայտնությանը: Սակայն օրագիրն ավելի շատ հիշեցնում է վարքագրություն, հիշատակարան, ձամփիորդական և ինքնակենսագրական գրառում (Սուրբ Ավգուստինոս, Պիեռ Աբելյար, Մոնտեն): Գրականագիտության մեջ տեսակետ կա, թե օրագրությունը վեպի՝ որպես գրականության նորահայտ ժանրի նախաֆենոմենն է և իոդ է նախապատրաստում նրա հայտնությանը: Այդ իսկ պատճառով օրագրության ձևավորումը որոշ տեսաբաններ համարում են 18-րդ դարը՝ միանգամայն անտեսելով անտիկ և միջնադարյան շրջանը, ինչը սահմանափակում է ոչ միայն ժանրի պատմությունը, այլև նրա տիպաբանությունն ըստ կառուցման սկզբունքների և ըստ շարադրման մեթոդների: Մյուս կողմից՝ արդեն 17-րդ դարում գրականության մեջ նկատվում է ժանրերի սխեմատիկ կանոնների ավերում, դրանց փոխներթափականցում: Անգլիական գրականության մեջ օրագրության պատմության սկզբնավորումն, օրինակ, գրականագետ Զուրաբ Սուրմանիձեն կապում է միջնադարում ձեռագիր-մատյանների ընդօրինակման հետ: Եկեղեցին կամ ազնվականները ձեռագիրն ընդօրինակողներ էին վարձում: Վերջիններս կարծում էին, որ եթե տեքստը պատկանում է պատվիրատուին, ապա «լուսանցքը» իրենց դիտողությունների, դատողությունների գրառման համար է: «Թերևս,- նշում է գրականագետը,- նրանք այդպիսով ենթագիտակցորեն ձգտում էին կանգնեցնել կյանքի ընթացքը կամ հիշատակ թողնել իրենց մասին սերունդներին, նույնիսկ առանց իրենց անվան հիշատակման»:<sup>6</sup> Ուստի գրականագետ Կոբրինը ժանրի նախապատմությունը կապում է կլասիցիզմի հետ, իսկ բուն պատմությունը, ժանրի դերն ու նշանակությունը գրականության մեջ՝ ռոմանտիզմի:<sup>7</sup> Լուսավորիչները, լայնորեն կիրառելով օրագրության հնարավորությունները, կյանքի ներքին օրինաչափությունները բացահայտելու հետ մեկտեղ ձևաբանել են գեղարվեստական մտահղացման փաստագրականությունն ու բանաստեղծականությունը: Նրանց

6. Յորաբ Սուրմանիձե, Հանր ձնենիկա և անգլունական լուսավորություն հայության մասին, Ավտորեփերամ, Կյույ, 1990, ս. 11:

7. Կոբրին Կորսով, Պոխվալա ձնենիկա, Նորու լուսավորությունները, Կյանքի ներքին օրինաչափությունները բացահայտելու հետ մեկտեղ ձևաբանել են գեղարվեստական մտահղացման փաստագրականությունն ու բանաստեղծականությունը: Նրանց

օրագրությանը բնորոշ է Եսակենտրոնությունը (էպոցենտրիզմ): Օրագրողը մշտապես նկարագրվող իրադարձությունների կենտրոնում է, քանզի նրա Ես-ը, հիգեվիճակը ինքնազննան ու վերլուծության առանցքային նպատակն է: Ի տարբերություն լուսավորիչների, ովքեր հայտարարեցին բանականության պաշտամունք, սենտիմենտալիստներն ու ռոմանտիկները օրագրության նյութ են ընտրում մարդու ներաշխարհը, իսկ 19-րդ դարում վերջնականապես մշակվում են օրագրության ժամրային սկզբունքները, պոետիկան, կառուցվածքը և այլն, բարձրանում է նրա գեղարվեստական արժեքն ու նշանակությունը: Տեսակետ կա, որ 20-րդ դարասկզբին օրագրության կենսական նշանակությունը կապված էր գեղարվեստական խոսքի ճգնաժամի հետ, իսկ իրատարակված օրագրներն էլ ավելի են մեծացնում հետաքրքրությունը թե՛ անցյալի, թե՛ ժամանակակիցների օրագրությունների հանդեպ հատկապես գեղագիտության և մոդեռնիզմի ազդեցության պարագայում:

Ներկայումս օրագրությունը լայնորեն կիրառվում է նորագույն տեխնոլոգիաների ընծեռած հնարավորությունների շնորհիվ: Ստեղծվում են բլոգներ, որոնք կազմված են օրագրային հաղորդագրություններից: Դրանցից յուրաքանչյուրը տեղեկություն է պարունակում օրագրի վարման ժամանակի վերաբերյալ, հղումներ հաստատում օրագրողի կենսագրության, ծրագրերի, տարատեսակ գրառումների և այլնայլ բլոգների հետ: Այստեղ, սակայն, չի պահպանվում ժամանակագրական հաջորդականությունը. գրառումները երբեմն ընդհատվում են. ինքնավերլուծությանը փոխարինում է հեգնանքը: Այդ օրագրությունների գիտավոր և էական առանձնահատկությունն այն է, որ օրագրողը համացանցային բլոգ-օրագրերում փնտրում է համախոհների և կարողանում գտնել նրանց:

Երկար ժամանակ գրականագիտությունը օրագրությունը համարել է ստեղծագործողի կենսագրական կնճիռների, ստեղծագործությունների վերաբերյալ աղբյուրագիտական ճշգրտումների պարզաբանման միջոց՝ այդ կերպ գրկելով գեղարվեստական արժեքից, իսկ նրա գիտական ուսումնասիրությունն ուղղորդվել է բովանդակության, գաղափարագեղարվեստական տարրերի վերլուծությանը:

Օրագրությունը (անկախ նրանից՝ ով է այն վարում) ունի ժամրային իր կարուցվածքը, զարգացման օրինաչափությունները, փոխառնչությունը գեղարվեստական գրականությանն ու նրա ստեղծագործական ընթացքին, վարման մեթոդը, բովանդակությունը, կերպարների և պատկերային համակարգը, սյուժետային ուղղվածությունը, ոճը: Օրագրի ժամրային յուրահատկությունը նրա ֆունկցիոնալ նշանակության մեջ է: Ըստ այդմ ռուս գրականագետ Օլեգ Եգորովը օրագրերը դասակարգում է չորս խմբի՝

1. Անհատի հոգեբանական ինքնահաստատում, երբ ներքին կոնֆիդենտ կա սեփական Ես-ի և շրջապատի միջև, երբ անհրաժեշտ է հուզազգացական ոլորտում վերապրման գիտակցումը: Այսիսկ օրագրությունները նպաստում են սոցիալական աշխարհի հետ ադապտացման գործընթացին և գրվում են վաղ պատանեկության տարիներին:
2. Հոգեկան աշխարհի բովանդակությունն արտացոլող միակ վայր, որ գրվում և պահվում է վաղ պատանեկությունից մինչև խոր ծերություն:

3. Հոգեբանական վերլուծությունների տարածք, որ գրվում է կյանքի երկրորդ կեսից կամ ավելի ուշ, երբ պահանջ կա ամենանվիրական մտքերը կիսելու գրուցակցի հետ, երբ առավել սուր է զգացվում հոգևոր միայնությունը կամ ինքնարտահայտվելու կարիքը:
4. Օրագրեր, որ գրվում են անազատության, կյանքի արտակարգ պայմաններում՝ հանդիսանալով ինքնարտահայտման միակ «վայր»:  
Իսկ գրականագետ Աննա Կոլյադինան օրագրերը դասակարգում է երեք խնդի՝
  1. Օրագիր, ուր արտացոլված իրադարձությունները գրական և պատմական կոնտեքստի հետևանք են:
  2. Գրողի օրագիր (Ճնշում ուսառելք)` արվեստագետների, գիտանականների օրագրություններ, որոնց գեղարվեստական արժեքը շատ բարձր է: Դրանք ենթակա են հեղինակի կոնկրետ գաղափարին և արտացոլում են այն: Ի տարբերություն կենցաղային օրագրության՝ այստեղ առկա է գնահատողական վերաբերմունք:
  3. Գրական ստեղծագործություն օրագրի կառուցով («Պեչորինի օրագրեր» Լերմոնտովի «Մեր ժամանակի հերոսը վեպում», Տուրգենևի «Ավելորդ մարդու օրագրեր» և այլն):<sup>9</sup>

Օրագրության ժամրի տիպաբանության տեսությունը թերևս ամբողջովին հետազոտված չէ, սակայն կարելի է ասել, որ այն հիմնավորվում է երեք գլխավոր հանգամանքով՝ տիպաբանություն ըստ կառուցվածքի, տիպաբանություն ըստ օրագրելու մեթոդի և տիպաբանություն ըստ ոճի կամ պոետիկայի: Այս հանգամանքը հիմք է տվել հետազոտողներին օրագրությունը նամականու հետ դասել քնարական սերին պատկանող ժամրերի շարքը:

Ժամրի տիպաբանության վերաբերյալ իր հետազոտության մեջ Դ. Պոլյակը տիպաբանական հիմնական նշանները խնդրավորում է երեք կատեգորիայում՝ բովանդակային, ծևակոմպոզիցիոն, ընդհանրական-ժամրային: Բովանդակային նշաններն են՝

1. Կենտրոնաձիգ.- արտացոլման առարկան և նրա արտացոլման յուրահատկությունը (հաճախ ինքը հեղինակն է),
2. Կենտրոնախույս.- դարաշրջանի հասարակական-քաղաքական, գրական կյանքը,
3. Հեղինակի անհատականությունը.- անկեղծությունը, նեղ անձնականը, բարի, ոճի կատարելության հասնելու ձգտումը,
4. Ժամրային սինկրետիզմը կամ, այլ կերպ ասած, ժամրերի հիբրիդացումը.- օրագրությունը միաժամանակ էսսե է, գրական ստեղծագործություն, գրական դիմանկար, աֆորիզմ, խորհրդածություն, գնահատում, ինքնավերլուծություն, իրադարձության արձանագրում:

Օրագրի ծևակոմպոզիցիոն նշաններն են՝

1. օրվա, ամսվա, տարեթվի նշումը,
2. ամենօրյա կամ հաճախակի լակոնիկ գրառումը,

8. Олег Егоров, *Дневники русских писателей XIX века*, М., 2002, с. 5-6:

9. Колядина Анна, *Дневник как литературы* жанр, <http://lit.1september.ru/articlef>:

3. մտքի ընդհատականությունը (երբ օրագրողն ստիպված ընդհատում է ընդարձակվող միտքը՝ հիւսալով այն շարունակել իր հետագա շարադրանքում, քանի որ օրագրային գրառումը ենթադրում է սեղմ ծավալ):  
Ընդհանուր-ժամրային նշաններն են՝

1. Իրադարձության համաժամանակյա (սինխրոն) գրառում (սա Ենթադրում է իրադարձության փաստացի հավաստիություն, կոմպոզիցիայի անավարտություն և զարգացում, ընդհանուրի բացակայություն և մասնավորի ներկայություն),
2. ավտոկոմունիկատիվ, ինչի շնորհիվ օրագիրը տարբերվում է էպիստոլյար և մենուարային ժանրերից: Եթե նամակագիրը գրուցում է ներկայում, իսկ հուշագիրը՝ ապագայի իր ընթերցողի հետ, ապա օրագրողն ինքն է իր գրառումների հասցեատերը թե՛ ներկայում, թե՛ ապագայում և նույնիսկ անցյալում:<sup>10</sup>

Օրագրի տիպաբանական այս առանձնահատկությունները գրականագետորդասակարգում է երկու խմբի՝

1. պարտադիր (անվիշտին՝ սիւարսահողութեա - առարկայի արտացոլման, դիրքորոշման յուրահատկությունը, ժանրային սինկրետիզմը, ամիս-ամսաթվի նշումը, գրառման հաճախակիությունը, մտքի ընդհատականությունը, իրադարձության համաժամանակյա, փաստացի, հավաստի գրառումը),

2. Կամընտրական (փոփոխական՝ բարստման և արտացոլման տարբերակները, խոստովանանքի դրդապատճառները, ժանրային սինկրետիզմի տարատեսակ դրսերումները, լակոնիկ գրառումը, օրագրի ու գրառման կոմպոզիցիայի անավարտությունն ու զարգացումը):

Իր հետազոտությունների առանցքում մասնավորապես քննաբանելով 20-րդ դարի ռուս գրողների օրագրերը՝ Պույակը գրողի օրագիրը (Ճհեմուկ ուսառելա), տիպաբանական առանձնահատկություններից ելնելով, դասակարգում է հինգ խմբի, որոնք էլ, իրենց հերթին, ունեն իրենց ենթախմբերը՝

1. Ղասակարգում ըստ ֆունկցիայի (օրագրելու դրդապատճառները)`  
ա) մասնագիտական՝ ստեղծագործական ձգնաժամից դուրս գալու փնտրություններ, ոճի կատարելության ձգտում, իրականության և աշխարհի միջինության ընկայում և ճանաչում, ճշմարտության որոնում,

բ) անձնական՝ զգացմունքային ռոբերգությունից ազատվելու ուղի, ինքնախոսադրության պահանջ, պահի «հավերժացման» զանկություն:

## 2. Դասակարգում ըստ արտացոլման առարկայի՝

ա) «կենտրոնախույս» (արտաքին աշխարհ)` կյանքի փիլիսոփայական իմաստավորում, փաստագրություն,

բ) «կենտրոնածիգ» (սեփական ներաշխարհ)՝ ստեղծագործական մինտրուսութեր, ներաշխարհի, հոգեկան ապրումների գրառում,

գ) Խառը՝ անցում առաջինից երկրորդին:

### 3. Դասակարգում իստ ժանրային բովանդակության՝

ա) օրագիրը՝ ստեղծագործական լաբորատորիա (փորձարարություն),

10. Поляк Дина Мироновна, Жанр дневника и проблемы его типологии, Автограф, Алматы, 2004, с. 13-14;

- բ) սոցիալ-քաղաքական,
- գ) գրական կյանք (փաստագրություն),
- դ) զուտ գրականություն:

4. Դասակարգում ըստ կոմպոզիցիայի՝

- ա) դիսկրետիկ (գրառումները կապված չեն միմյանց),

բ) միջանցիկ (գրառումները կապված են ըստ թեմայի, կերպարի, տրամաբանության),

գ) հաջորդականություն (միմյանց հաջորդում են կարճ և ծավալուն, սեփական և ուրիշներից մեջբերվող, համաժամանակյա և հետահայաց գրառումները):

5. Դասակարգում ըստ գրառման կառույցի՝

- ա) կազմություն՝ միասեռ, բարդ,

- բ) ծավալ՝ համառոտ, ընդարձակ,

- գ) հասանելիության աստիճան՝ գաղտնագիր, բաց:<sup>11</sup>

Օրագրողի այս նպատակադրումներից որևէ մեկով է պայմանավորված օրագրության հոգեբանական տիպաբանությունը, որն, ըստ Եգորովի, կարող է լինել էքստրավերտ, ուր արտացոլման առարկան աշխարհն է ինքնին, ինտրովերտ, ուր արտացոլման առարկան օրագրողի ներաշխարհն է, հոգևոր կյանքի և արտաքին աշխարհում տեղի ունեցածի սուբյեկտիվ վերապրումը:<sup>12</sup>

Օրագրերում իրադարձությունների տարածաժամանակային ներկայացման առանձնահատկությունները (երբ որևէ դեպք հիշատակվում է կոնկրետ վայրում, կոնկրետ ժամանակում, զարգացման հաջորդականությամբ, պատճառահետևանքային կապով և կյանքի տարերային հարահոսությունից անքակտելի) ներկայացվում են որպես դրանց անմիջական մասնակից (լոկալ), որպես օրագրողի հոգեբանության արտացոլում (հոգեբանական) և որպես հեռվում կամ անցյալում տեղի ունեցած իրադարձություն (գլոբալ):<sup>13</sup> Այստեղ էական դեր է կատարում օրագրողի ստեղծագործական մեթոդի ընտրությունը, երբ գրառվում են ոչ միայն օրվա իրադարձությունները, այլև մեջբերվում հուշեր, տպավորություններ անցյալից, կատարվում համեմատություններ՝ ձևավորելով օրագրի մի նոր ենթատեսակ՝ ձանփորդական օրագրությունը: Փաստորեն Օ. Եգորովը օրագրության բովանդակությունը շաղկապում է նրա տիպաբանությանը և, ի թիվս ձանփորդական օրագրության (Պագողին, Օստրովսկի, Գարին-Միխայլովսկի),<sup>14</sup> առանձնացնում է հասարակական-քաղաքական (Նիկիտենկո, Օդուևսկի, Սուվորին), ընտանեկան (Ս. Տոլստոյա, Սուխոտինա), սոցիալական-կենցաղային (Շևենկո), հոգեբանական (Չեռնիշևսկի, Տոլստոյ), փիլիսոփայական (Գերցեն) ենթատեսակներ,<sup>15</sup> 18-րդ դարի անգլիական օրագրության հետազոտող Զ. Սուրմանիձեն շեշտում է կրոնական

11. Նույն տեղում, էջ 16-17:

12. Օleg Еgorov, *Дневники русских писателей XIX века*, М., 2002, срр. 7:

13. Նույն տեղում, էջ 6:

14. Քաղաքական-հասարակական-ծառայողական-գիտական ոլորտների բազմազանությամբ պայմանավորված ձանփորդական օրագիրը ըստ գրոծումնեության բնագավառների բաժանվում է ենթատեսակների: Դրանցում արտացոլվում են աշխարհագրական, կենսարանական, կենդանաբանական ու էթնոգրաֆիկ հայտնագործություններ և ուսումնավորություններ (Վայիշանով, Բուտակով, Կուլցա): Այս մասին առավել մանրամասն տես՝ Պոլյա Դսիա Միրոնովա, Հանր դնեմնիկ ու որելու մասին տպոլոգիա, Ավտորեֆերատ, Ալմատы, 2004, срр. 10-11:

15. Օleg Еgorov, *Дневники русских писателей XIX века*, М., 2002, срр. 8:

օրագրության առկայությունը՝ կապված դարաշրջանի հոգևոր-իմացաբանական շարժումների, գրականության նորանոր ժանրերի ձևավորման, լուսավորիչների գաղափարախոսության, անհատի ինքնագիտակցման ձգտումների հետ:<sup>16</sup> Այս ենթատեսակներից յուրաքանչյուրը ենթադրում է շարադրման, նկարագրման որոշակի ոճ, ուր բարի սեմանտիկ նշանակությունը իրականացնում է կոնկրետ գործառույթ՝ հատուկ ընտրված տեղեկության հաղորդում առանց որևէ միջամտության կամ վերլուծության, դրանց հոգեզգացական գնահատում, որը և պայմանավորում է ժամրի «ինքնագիտակցումը» սուբյեկտիվ եղանակով:

Կախված օրագրողի՝ իր առջև դրած հարցադրումներից՝ օրագրության ոճը գրականագետ Եգորովը բաժանում է երեք խմբի՝ տեղեկատվական, վերլուծական և գեղագիտական, թեև ինարավոր է դրանց միաժամանակյա առկայությունը: Այստեղ էական դեր են խաղում օրագրողի անհատականությունը, նրա բարոյաբանական ու գեղագիտական համոզմունքները, քանզի նա միաժամանակ օրագրության թե՛ սուբյեկտն է և թե՛ օբյեկտը: Այս հանգամանքը հիմք է տալիս օրագրությունը դիտելու որպես փակ կամ մենախոսական ժանր՝ ի տարբերություն նամականու, որին բնորոշ է բաց կամ երկխոսության բնույթը:

Հայ գրականության պատմության մեջ ժանրի տեսության հարցերին անդարձարձել է մասնավորապես ե. Զրբաշյանը՝ առանձանելով երեք հիմնական չափանիշ՝ ժանրի թեմատիկ առանձնահատկությունները և փոխառնչությունները կյանքին, մարդն իբրև առանցքային կերպար, գեղարվեստական կառուցի պատկերման սկզբունքները, ժանրի առանձնահատկությունները և տարատեսակները: Ինչ վերաբերում է ժանրի ձևավորմանը հայ գրականության պատմության մեջ, ապա այն ընդգրկում է ավելի վաղ ժամանակաշրջան, ուր, սակայն, հստակ սահմանագատված չեն ժանրի սահմաններն ուղեգրությունից, վարքագրությունից ու այլ տարատեսակներից:<sup>17</sup>

Հայ գրականություն մեջ ուղեգրության, օրագրության, հուշագրության ու նամականու ժանրերի վերաբերյալ գրականագիտությունը դեռևս իր ասելիքն ունի: Մասնավորապես չկան ամբողջական հետազոտություններ օրագրության ժանրի պատմության և տեսության, տիպաբանության, պոետիկայի, փիլիսոփայական հղացքի, գեղագիտական-մշակութաբանական նշանակության, ստեղծագործական ընթացքի հետ փոխառնչությունների, գրականության պատմության մեջ ընդհանրապես, որևէ ժամանակաշրջանը՝ մասնավորապես ներկայացնելու նրա տեղի և դերի վերաբերյալ և այլն: Որքան մեզ հայտնի է՝ այս իմաստով ուշադրության է արժանացել Ա. Իսահակյանի «Հիշատակարանը», որի վերաբերյալ գրվել է ատենախոսություն:<sup>18</sup>

Փորձելով ի մի բերել օրագրի դերն ու նշանակությունը գրական-պատմական գործընթացում՝ ընդգծենք, որ այն հոգևոր վարք է կամ ինտելեկտուալ առանձնացման, ինչպես և մշակութային պահանջի ծև, անհատի ձևավորման, նրա աշխարհայացքի կազմավորման, ինքնագիտակցության ու ինքնաքննության վայր,

16. Յորաբ Սուրմանձե, Ժանր ճաշակա և անգլանակա լուսաբառություն XVIII ամսագրությունը՝ կազմակերպությունը՝ 1990, ս. 12-13:

17. Էդվարդ Զրբաշյան, Գրական ժանրեր, Երևան, 1973: «Գրական ժանրերի հիմնական չափանիշների մասին», «Բանագործությունների համարականի», №3, 1970:

18. Շողիկ Խաչատրյան, Ավետիք Խաչատրյանի օրագրերը, Երևան, 2002:

պատմական, անձնական-կենսագրական փաստական նյութի՝ ինֆորմացիայի փոխանցման ու հաղորդման հավաստի միջոց:

**Նարինե Պետրոսյան**

2010